ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 դեկտեմբերի 2020թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Բաղալով

Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Արեգ Ափոյան, Հայկ Հովհաննիսյան

1. **« ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի N 1, 2 չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 04.12.2020թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2020 թվականի դեկտեմբերի 11-ին, Ժամը՝ 11:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար «ինտերնետ կապի և տվյալների փոխանցման» ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի 11 դեկտեմբերի ժամը՝ 11:00-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N 1, 2 չափաբաժինների մասով նիստը կասեցնել և «Ջի էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին և «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, քանի որ N 1, 2 չափաբաժինների մասով «Ջի էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն ներկայացրել են գնային առաջարկ:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի ունեցավ 15.12.2020 թվականին ժամը 11:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց 63 հասցեում: Նիստին ներկա էր «Ջի էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, իսկ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչը չի ներկայացել բանակցությանը:

1.4 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի N 1, 2 չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման համար հանձնաժողովը տրամադրեց 15 րոպե ժամանակ, որպեսզի մասնակիցը ներկայացնի իր վերջնական գնային առաջարկը: Նշված ժամանակի ընթացքում՝ «Ջի էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն N 1, 2 չափաբաժինների մասով ներկայացրեց նոր գնային առաջարկ:

1.5 Ստորև ներկայացվում է 15.12.2020թ.-ի ժամը 11:00-ին « ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նիստի ժամանակ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի նվազեցված գնային առաջարկները՝ N 1,2 չափաբաժինների մասով:

Հ/հ	Գնման ծառայության անվանումը	Գնման ծառայության նախահաշվային գինը (ՀՀ դրամ)	Նվազեցված գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար (ՀՀ դրամ)
			«Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն
			ներառյալ ԱԱՀ-ն
1	Ինտերնետ կապի տրամադրում	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	5832000
2	Տվյալների փոխանցման ծառայությունների տրամադրում	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	7920000

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար ինտերնետ կապի և տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով,էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի N 1,2 չափաբաժինների գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի N 1, 2 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ջի Էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկն ամենացածրն է և չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

2.3. «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հաձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Բաղալով

Քարտուղար՝ _____ Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ

1 _____ Ա. Ափոյան

2 _____ Հ. Հովհաննիսյան